

1931

235

U-29

1908

Арм.
2-4007a

2-4007a
248.
21.4.11.5.248
157
unf

ԱԼԷԲՍԻԱՆՈՍ

Գինն է 5 Կ.

Թարգմանեց վրացերէնից

Տիկ. Սարաջեան

Имб. № 21125

ԹԻՖԼԻՍ

Արաղատիկ «Նաղեժդա» Սեմեն. փ. № 4
1908

235
2-29

235
Q-29

Aprm.

An. 157

ԱԼԷՔՍԻԱՆՈՍ

Շատ հին ժամանակ ապրում էր Ստամբուլ քա-
ղաքում ամենահարուստ և անհամար գանձ, ոսկի ու
մարգարիտ ունեցող մարդ, գիւղերու ազարակներ հա-
ղարներով էին հաշւում և որի անունն էր Նփրեմ, իսկ
կնոջ անունն էր Աննա: Նփրեմը յունաց թագաւորի
շատ մօտիկ բարեկամն էր: Նփրեմը և իր կին Ան-
նան անժառանգ էին, ուստի տխրութեամբ գիշեր
ցերեկ Աստծուն աղաչում պաղատում էին, որ ի-
րանց մի զաւակի արժանացնէր: Մեր մահից յետոյ
այսքան անհամար հարստութիւնը մեծը պէտք է մնայ
կամ ո՞վ պէտք է տիրանա, քանի որ ոչ բարեկամ ու-
նենք և ոչ ժառանգ՝ ասում էին ու ողորում: Մէկ օր
Աննան գնաց իր ազախիւններով ու ծառաներով Սուրբ
Սօփիայի մեծ եկեղեցին ուր աղօթեց և Աստծուն
խնդրեց, որ իրան որդու արժանացնէր. նայեց Աստ-
ւածածօր պառկելին և սիրտը լցելով լաց եղաւ.
եկեղեցուց դուրս գալով՝ տեսաւ բաւականին աղքատ-
ներ, որոնց առատութեամբ բախշելով՝ հեռացաւ դէպի
տուն: Աղքատները դիտէին որ Աննան անզաւակ էր,
բոլորը միաբերան օրհնեցին և Աստծուն խնդրեցին
մի զաւակի արժանացնելու: Իրանց բարեբաղուհուն:
Ճանապարհին Աննային հանդիպեց մի աղքատ մարդ,
որը գիմելով տիկնոջ, ասաց. «Ձեր միջուկաւ որդու



45044. ա. հ.

2001



29354-63

արեշատութեան համար վարձատրեցէք: Այս խօսքը լսելուն պէս արտասուեց ու ասաց. «վա՛յ ինձ որ դաւակ չունեմ, բայց ուրիշները իմ որդու արևով են երդուում:

Այն գիշեր Աննան երազ տեսաւ. մի ծերունի մօտենալով Աննային ասաց. «Աննա, Աննա, քո աղօթքը լսելի եղաւ Աստծուն և նորա առաջ յայտնի դարձար որպէս մի բարեբարունհի, ուստի դուք որ արծաթից շինած տուն ունէք անհամար ոսկով ու արծաթով կերտած, այն ծախիր և աղքատներին ողորմութիւն բաժանիր, Աստուծով զաւակ կունենաք և անունը Ալէքսիանոս կը կոչէք:

Երբ Աննան արթնացաւ իսկոյն Աստծուն փառք և պատարագ մատուցանել տւեց իր ծխատէր քահանային, մատաղներ մօրթել տւեց և իր ձեռքով աղքատներին բաժանեց, բաժանեց և ոսկի արծաթ ու շատ մարգարիտներ: Ոսկուց ու արծաթից շինւած տունն էլ ծախեց և բաժանեց աղքատներին: Աննան պատւիրեց Եփրեմին, որ ոսկին ու արծաթը փող կտրիլ տայ, մարդ ուղարկեց իր գաւառները և գիւղերը, հրաւիրեց եպիսկոպոսներին և քահանաներին որոնց թիւը հասնում էր 385 հոգու, իսկ աղքատների, անկեանքի և կոյրերի թիւը չորս հարիւրի: Սրանց ամենքին մի ամբողջ ամիս աղօթք անել տւեց, որպէս զի Աստուած լսի նրանց խնդիրքը և իրան մի արու գաւակ պարգևի, ինքն էլ անդադրում աղօթում էր և ս. Սօփիայի մեծ եկեղեցում պատարագ մատուցանել տալիս:

Աննան զգալով իր երեք ամսեայ յղի լինելը, այս մասին յայտնեց իր սիրելի Եփրեմին, որը անչափ ուրախացաւ և երբ իններորդ ամիսը լրացաւ, Աննան ծնեց մի սիրուն և տեսքով հրաշալի արու գաւակ: Ութերորդ օրը հրաւիրեց եպիսկոպոսներին և քահանաներին, մօրթել տւեց մատաղներ և բոլոր աղքատներին բաժանեց և երեխան մկրտելով անունը կոչեցին Ալէքսիանոս:

Երբ կրեխան եօթը տարեկան դարձաւ, ծնողները յանձնեցին ուսումնարան և լաւ ուսուցիչներ վարձելով՝ սկսեցին իրանց որդուն ուսուցանել: Ալէքսիանոսը շատ խելօք երեխայ էր և շատ շուտով էլ ուսումնասիրեց թէ յունաց և թէ հրէական լեզուները, և կարդում ու գրում էր առանց ուսուցչի օգնութեան:

Երբ գիտութեան ծառաւը յագեցրեց, ցանկացաւ նոր կտակարանը կարգալ, այս պատճառով իր մօրը մի նամակ գրեց. «սիրելի մայրիկ, գիտութեան ուսումը արդէն վերջացրի, այժմ ցանկանում եմ Աւետարան կարգալ և Աստուծոյ ճշմարտութիւնը լսել: Այս իմանալով Աննան, յայտնեց Եփրեմին որդու ցանկութիւնը. Եփրեմը ուրախանալով որդու յառաջադիմութեամբ, գնեց Աւետարան և ոսկով ու արծաթով շրջապատելով ուղարկեց որդուն: Երբ որդին Աւետարանը ստացաւ սկսեց ազահուլութեամբ կարգալ և ուսումնասիրել նոր կտակարանը, որի համար ստացաւ գլխահանի տիտղոս:

Երբ 15 տարին բոլորեց, ծնողները ցանկացան

տեսնել իրանց զաւակին և ուրախանալ: Երբ Ալէք- սիանոսը ներկայացաւ ծնողներին, մեծ ուրախութիւն ու ցնծութիւն պատեց հանդիսականներին մէջ, որ տօնախմբութեան տօնիթալ հաւաքել էին Եփրեմի ու Աննայի հիւրասիրութիւնը ճաշակելու: Երբ ճաշը վերջացաւ ամենքն օրհնեցին Ալէքսիանոսին և ուրախ ու գոհ հեռացան:

Թագաւորը Եփրեմին շատ էր սիրում, ամեն ժամանակ և ամեն բոլի միասին էին ճաշում ու ուրախանում և երբ Ալէքսիանոսը 16 տարեկան դարձաւ, մտքում դրեց իր աղջիկը Ալէքսիանոսին կնութեան տալ: Մի անգամ Թագաւորը յայտնեց Եփրեմին իր սրտի փափազը և ասաց. «Ես էլ մի աղջիկ ունեմ, դու էլ մի տղայ, ուստի պսակենք և բաղդաւորացնենք, իմ մահից յետոյ իմ Թագաւորութիւնն էլ դրանց կը կտակեմ և թող ապրեն ու ուրախանան: Եփրեմը երբ տուն հասաւ պատմեց իր կնոջը Թագաւորից բոլոր լսածը: Աննան շատ ուրախացաւ Թագաւորի այս առաջարկութեան վրայ և գոհ սրտով փառք տուեց Աստծուն:

Միւս օրը որդին ուղեց իմանալ ծնողների ուրախութեան պատճառը, ուստի և դիմեց ասելով. «Այդ ի՞նչ Աստծոյ բարին է տա՞ծ ձեզ, որ այդչափ ուրախ էք: Ծնողները յայտնեցին, որ Թագաւորը քեզ համար լաւ բան է մտածել և մենք էլ քո պատճառով ուրախանում ենք. դու Թագաւորի փեսան կը լինես, իսկ Թագաւորի աղջիկը մեզ հարս, Թագաւորութիւնն էլ ձեզ է կտակում: Այս բոլորը լսելուց յետոյ, Ալէք-

սիանոսը սաստիկ վիրաւորած զգաց իրան և ասաց. «Հայրիկ, երանի այդ խօսքերը չէիր ասել և չէիր վիրաւորել ինձ. իմ բոլոր աշխատանքը ձեր խօսքով պէտք է կործանւի ու ոչնչանայ, որովհետեւ սուրբ Աւետարանը հրամայում է. «բոլոր աշխարհը երազ է» ուստի իմ ամուսնութեան վրայ ոչ մտածելու ժամանակ ունեմ և ոչ էլ որ և է ցանկութիւն պսակուելու:

Եփրեմը որդու ասածները յայտնեց Թագաւորին, իսկ Թագաւորը յուսադրեց ասելով. «Քո որդին գիտուն տղայ է, ուստի հարկաւոր է գիտուն մարդու հետ խօսեցնել և համաձայնեցնել: Ես ճանաչում եմ մի գիտնական, կը կանչեմ նրան և խորամանկութեամբ կարելի է խաբել և աղջկաւ հետ պսակել. դու միամիտ եղիր այս մասին»: Եփրեմը տխուր հեռացաւ, իսկ այդ միջոցին Թագաւորը մարդ ուղարկեց և Ալէքսիանոսին իր մօտ հրաւիրեց: Երբ Թագաւորի հրաւերը լսեց, շտապեց ներկայանալ Թագաւորին և խոնարհ գլուխ տալով առաջը կանգնեց: Թագաւորը շատ հաւանեց Ալէքսիանոսին և ասաց. «Որդեակ, ինչո՞ւ ես ուրանում կեանքը և մահը գերադասում, միթէ քեզ համար կեանքը գին չունի»... Ալէքսիանոսը խոնարհ գլուխ տալով պատասխանեց. Թագաւոր, ինձ համար կեանքը այնքան գին ունի, որքան ձեզ համար սև փողը, Աւետարանը պատուիրում է, որ «ով չթողնէ հայր, մայր, կին, որդի, հայրենիք, տուն, ազգական և ձեռքին չը վերցնէ իմ խաչը, նա արժանի չէ ինձ, ոսկին ու արծաթը

ժանգ է, դարձեալ այս աշխարհումը կը ֆնայ: Անմահ չեմ, որպէս զի ազահութեամբ յափշտակեմ երկրի փառքը, մահկանացու ենք, հող ենք և հող պէտք է դառնանք: Թագաւորը լսելով այս, չը կարողացաւ պատասխան տալ, կանչեց իր նախարարներին և ասաց. «Ես այս մանուկին չկարողացայ համոզել, որ իմ աղջիկս կնութեան տամ»: Նախարարները մտածելուց յետոյ ասացին, «Ձեր նշնարանում ուղարկեցէք և թող լաւ պատեն, մինչև մենք մի ուրիշ ելք մտածենք»:

Մի քանի ժամից յետոյ նախարարները թագաւորին յայտնեցին. «Այս երիտասարդը այնպիսի գիտութեան բովից է անցել, որ մեզանից ոչ մէկը չէ կարող դրա ուղեղում մի բան մտցնել: Եթէ ցանկանում էք, տեղեք դրան մի առանձին նշարան, որտեղ կը լինի և ձեր աղջիկը, և այդպիսով շատ կարելի է սիրահարել և պսակել»:

Այս խորհրդին թագաւորը շատ հաւանեց և ինչպէս նախարարները առաջարկեցին, այնպէս էլ արեց, բայց ոչ մի կերպ չկարողացան համոզել: Եկան և Ալէքսիանոսի ծնողները. խնդրեցին, ազաչեցին, պաղատեցին որ ընդունի իրանց առաջարկութիւնը, ասելով. «Որդի, Աւետարանում այն էլ է գրած, որ ծնողներիդ պէտք է պատուես ու հնազանդես, ծնողներիդ կամքից չպէտք է շեղես, անառակ որդին շուտ կը մեռնի և ծնողները անէծքին կարժանանայ»: Այս և սրա նման խօսքեր շատ կրկնեցին և վերջապէս ինքը, Ալէքսիանոսն էլ իր մտքում մտածեց. «Այսպէս հակառակել անկարելի է, կը պսակեմ և ինձ անա-

ռատ կը պահեմ, մինչև Աստած իմ բանը աջողեցնի»: Այնուհետև մտաւ քահանան, և սկսեց խրատել և տախի, որ ամուսնութիւնն էլ Աստուծոյ սահմանած օրէնք է, պէտք է պսակել... Ալէքսիանոսը համաձայնեց, նոյն օր և եթ պսակեցին և հարսանիքը մի քանի օր ու գիշեր տևեց:

Այնուհետև նորապսակներին առանձնացրին և միասին էին ապրում ինչպէս քոյր-եղբայր: Անցաւ այսպէս բաւական ժամանակ և ամեն գիշեր Ալէքսիանոսը զարթնելով Աստուծոն ազաչում-պաղատում էր, որ ամենայն փորձանքից ազատէր և միևնոյնը կրկնել էր տալիս իր կնոջը: Կնոջ անունն էր Մարգարիտ: Մի քանի ժամանակ անցնելուց յետոյ Մարգարիտին խրատեցին իր ծնողները, որ ամեն անգամ ամուսնու հետ սկսէր համբուրել, հանաքներ անել և ամեն կերպ զբաղեցնէր, որպէս զի կարողանար նրա սիրտը և հոգին գրաւել, զուցէ քաջքերից կապած լինէր և այդպիսով իր սիրով այդ գրութիւնից ազատէր: Մարգարիտը խրատածի պէս սկսեց ամուսնու հետ խաղալ, ամեն կերպ զբաղեցնել և սիրոյ վրայ խօսել, բայց սպասածին հակառակ Ալէքսիանոսից այսպիսի մի պատասխան ստացաւ. «Մարգարիտ, մի շտապիր, զեռ ժամանակ շատ ունենք, այժմ միայն պէտք է աղօթել, որ Աստուծոն ընդունելի լինենք, մի փոքր համբերիր և ամեն բան իր շաւղով կերթայ. աղօթքս վերջացնելուց յետոյ քո կամքը կը կատարեմ»: Այսպէս անցաւ մի քանի ժամանակ, բայց այս ժամանակամիջոցում Ալէքսիանոսը մտածում էր.

«Այսպէս ապրել անկարելի է, աւելի լաւ է վերցնեմ գլուխս և ընդմիշտ կորչեմ, ապա թէ ոչ այս անդգամը ինձ փորձանքի կը մատնէ. Աստուած Արբահամու, Իսահակայ և Յակոբայ ինձ փրկիր և ազատիր կնոջ կրակից այնպէս, ինչպէս փրկեցիր երեք անմեղ մանուկներին, Անանիային, Ազարիային և Միսայէլին մեծ կրակի ալիքներէից. կինը վարժած կրակ է և իմ ամենատխերիմ թշնամին»։ Կինը տեսնելով ամուսնու լըռութիւնը հարցնում էր. «Միրելիս, ինչո՞ւ չես խօսում ինձ հետ և քո սիրով ուրախացնում ու կշտացնում», իսկ ամուսինը իր ձեռքի մատանին կնոջ մատը անցնելով ասաց. «սիրելիս, ես աղօթարան եմ գնում, աղօթքս վերջացնելուց յետոյ կը գամ և քո կամքը կը կատարեմ»։

Հագաւ իր շորերը, Աւետարանը թաշկինակի մէջ փաթաթեց և դեռ լոյսը չբացւած հեռացաւ իր հայրական տնից։ Մօվի ափին դեռ չմօտեցած, ճանապարհին տեսաւ մի աղքատ, պատառուտած շորերով, հանեց իր շորերը և տեց նրան, իսկ նրանը՝ հագաւ ինքը և շտապ քայլերով մօտեցաւ ծովին. շոգենաւը պատրաստ էր երթալու, մօտեցաւ նաւապետին խնդրելով. «ես անապատի մարդ եմ, ուզում եմ Երուսաղէմ գնամ, ինձ էլ հետներդ վերցրէ՛ք և լաւութեան փոխարէն ձեր հողու համար կաղօթեմ»։ Նաւապետը ընդունեց Ալէքսիանոսին. շոգենաւը հեռացաւ նաւակայանից և մի քանի օրից յետոյ հասաւ այնտեղ, որտեղ Մովսէս մարգարէն խօսում էր Աստծոյ հետ։ Ալէքսիանոսը ցած իջաւ շոգենաւից ցամաք, որտեղ

բաւական եկեղեցիներ և ճգնաւորներ կային, խաչաձև հող փորեց իր բնակութեան համար և Աստծուն փառք տեց, այնուհետեւ վերցրեց իր սիրած ու պաշտած Աւետարանը և սկսեց գիշեր ցերեկ կարդալ ու աղօթել։

Միւս առաւօտ երբ Ալէքսիանոսի կինը զգաց ամուսնու փախուստը, սկսեց դառն կերպով ճչալ և ողբալ, մազերը պոկել և գլխին թակել։ Այս բոլորը լըսեցին թէ ծնողները և թէ թագաւորը և շատ նեղացած այս բանի վրայ, սկսեցին ամեն կողմ ողբալով փնտռել իրանց որդուն։ Շարժեց քաղաքը, սկսեցին որոնել, բայց ոչ Ալէքսիանոսի տեղը իմացան և ոչ էլ նրա տեսնողը գտնեցաւ։

Ալէքսիանոսը 12 տարի ապրեց անապատում. գիշեր ցերեկ սատանաները հանգստութիւն չէին տալիս և ուզում էին մի կերպ իր ընտրած ճանապարհից սխալեցնել, բայց չկարողացան ոչ մի միջոցով նրա սրտում որ և է սէր ձգել թէ ծնողների և թէ կնոջ։ Ալէքսիանոսը գիտէր թէ ռիքեր էին իր հետ խօսողները և երեսներին անգամ չնայելով՝ պատասխանում էր կարճ, «հեռացէ՛ք»։

Վերջապէս շատ ձանձրացնելուց յետոյ մտածեց հեռանալ այստեղից, և մի օր ծովի ափին մօտենալով՝ տեսաւ որ շոգենաւը պատրաստում է հեռանալու, խնդրեց նաւապետից որ իրան էլ հետը վերցնէր։ Նաւապետը ընդունեց և նաւը շարժեց դէպի Երուսաղէմ։ Լսելով սատանաները այս, մտածեցին այնպիսի մի փոթորիկ բարձրացնել, որ փոխանակ Երուսաղէմ գը-

նալու, իր հայրենիքը վերադարձնեն և այսպիսով Աստծոյ ճանապարհից հանեն: Մտածեցին և կատարեցին: Երբ շոգենաւը մօտեցաւ Ալէքսիանոսի հայրենիքի նաւակայանը, փոթորիկն էլ չքացաւ. փառք տւեց Աստծուն և նաւապետին դառնալով, ասաց. «Այսուհետև միք վախենալ, այլ ես փոթորիկ չի լինիլ, այս բոլոր դժբաղդութիւնը իմ պատճառաւ էր, շնորհակալ եմ ձեզանից, իսկ դուք հանգիստ ձեր ճանապարհը շարունակեցէք»:

Ալէքսիանոսը մտաւ հայրենի քաղաք և սկսեց աղքատութիւն անել: Մէկ աղքատ նրան ասաց. «Ինչո՞ւ ես դոնէ դուռ մուտալով ման գալիս, գնա Ալէքսիանոսի հօր մօտ և այնտեղ ուրիշ աղքատների հետ դու էլ ապրիր»:—Բայց որտեղ է նրանց բնակարանը: «Արի ես կը ցոյց տամ», ասաց և տարաւ. այն կողմ, որտեղ ապրում էին նրա ծնողները: Ծանապարհին Եփրեմը հանդիպեց նրանց, Ալէքսիանոսը ոտներն ընկաւ խնդրելով, որ իր որդու սիրոյ համար մի տեղ տան իրան ապրելու: Իսկոյն ծառաներին հրամայեց որ այն աղքատին տանեն և ինչպէս ուրիշներին այնպէս էլ նրան պահեն ու հոգան ամեն կերպ: Մի քիչ ժամանակ անցնելուց յետոյ, աղքատները սկսեցին Ալէքսիանոսին իրանց միջից հեռացնել, հայհոյել, զլխին թակել: Ալէքսիանոսը դանդաւուրեց այս մասին ծառաներից մէկին, նա էլ վերցրեց նրան և իր խնդիրքի համաձայն պալատի դրան մօտ մի տեղ տւեց, որտեղ ապրում էին և շները: Շները շուտով ճանաչեցին իրանց բարի տիրոջը և սկսեցին Ալէքսիանոսի ձեռք ու ոտները լիզել:

Ամենայն օր թէ մայրը և թէ ամուսինը ծովի ափն էին գնում, ուրում էին Ալէքսիանոսին և ապա յետ վերադառնում տուն հէնց որդու առաջից: Այս բոլորը տեսնում ու լսում էր Ալէքսիանոսը բայց Աստուծոյ սիրոյ համար համբերում էր:

Մի օր մայրը դուրս եկաւ պալատից բազմաթիւ աղախիչներով և անցաւ ուղիղ որդու առաջից, բայց ծառաները թակելով Ալէքսիանոսին ուղեցին հեռացնել այնտեղից: Որդին մօտեցաւ մօրը և ասաց. «Թէև աղքատ եմ, բայց Աստուծոյ ստեղծածն եմ, ինչո՞ւ ես այսպէս ծեծում ու թակում ձեր ծառաները»: Նայեց մայրը աղքատին, աչքերը գննեց. «աչքերը որդուս աչքերի նման է, բայց ափսոս որ որդիս չէ» ասաց և ծառաների վրայ բարկանալով դէպի ծովը գնաց, շատ ողբաց, ծովի ալիքների մէջ սկսեց որոնել իր որդուն, բայց թշաւո մայրը չգիտէր, որ իր որդին հէնց իր դրան շէմքուքն էր ապրում շների հետ:

Տասներկու տարի անցաւ այն օրից, երբ օտարութիւնից վերադարձաւ իր հայրենի երկիրը և Աստուծոյ սիրոյ համար անճանանչելի եղաւ ամենքին և շատ նեղութիւններ կրեց: Մի գիշեր երևաց հրեշտակապետը և ասաց Ալէքսիանոսին. «Մարդ Աստուծոյ, ուրախացիր, Աստուած ընդունեց քեզ և Այսուհետև ի վերին Երուսաղէմ պէտք է հանգստանաս. բաւական է, որքան դառնութիւն ու վիշտ կրեցիր»: Ալէքսիանոսը խնդրեց. «Երկու օր դարձեալ ժամանակ տուր, մինչև մի նամակ գրեմ և միք թոյլ տալ բացի հօրիցս ուրիշ որ և է մէկը կարգայ»: Հրեշտակապետը պատասխանեց. «Լաւ,

երեք օրից յետոյ կը գամ և ինձ հետ կը վերցնեմ քեզ: Ալէքսիանոսը երկրպագեց և գնաց մի թեթ մագաղաթի թուղթ գտաւ, մուռը սրեց և թանաք շինեց, և բաղի թեկից մի գրչածայր շինելով, սկսեց գրել. «Հայրիկ Եփրեմ, մայրիկ իմ Աննա և ամուսին իմ Մարգարիտ, ես Ալէքսիանոսն եմ ձեզ համար աղօթող և ներեցէք, ինչ որ ձեզ նեղութիւն տւի մինչև այսօր: Ամուսինս իմ, մատանին որ տւի ու հեռացայ տաներկու տարի սուրբ սարի վրայ ապրեցի և այնտեղից որ եկայ, հայրիկ, առաջին անգամ դու հանգիպեցիր և ես ոտներդ ընկայ և խնդրեցի, որ աղքատ եմ և ընդունիր ինձ, իսկ դու ինձ քո սպասաւորն երիզ յանձնեցիր և ձայնից գոնէ չձանաչեցիր քո որդուն: Մայրիկ իմ Աննայ, քո ծառաներդ որ ինձ մագերիցս քարշ էին տալիս և դուք հրամայեցիք, աչքերը իմ որդունման է, ինչ՞ու չուզեցիք իսկապէս իմանալ իմ ով լինելը, դուցէ լայիդ չէի ձեզ: Այժմ խնդրում եմ, սիրելի մայրիկ, ներեցէք ինձ իմ յանցանքը, ձեզ դժբաղդացնելու պատճառով. ձեր տւած Աւետարանը գլխավերես է, իմ փոխարէն սրան պահեցէք որպէս ձեր որդու յիշատակ: Տասներկու տարի ձեր տան դռան առաջ ապրեցի, ես վերին Երուսաղէմն էի ման գալիս, իսկ դուք ինձ էիք փնտռում... Այժմ սրտներդ զովացրէք քանի որ իմ սիրտն էլ ձեզ համար էր տանջւում, բայց Աստուծոյ կամքը աւելի գերադասեցի ձեզանից. այսուհետեւ միք լալ, ինչ որ լաց եղաք այդ էլ բաւական է... ես ձեզ համար այնտեղ էլ կաղօթեմ և յոյս ունեցէք, որ այն կեսնքում դուք էլ ինձ հետ կը

լինէք: Այս բոլորն աւարտելուց յետոյ նամակը ձեռքին բռնեց և հրեշտակապետը իր դասակից հրեշտակներով գալով, սուրբ հոգին երկինք բարձրացրին...

Կէս դիշեր էր երբ քաղաքի մէջ յանկարծ զանգակների ձայն լսեց: Ամբողջ քաղաքը ոտքի կանգնեց և ինչ տեսան, տեսան քաղաքը լուսաւորած ինչպէս ցերեկ: Հաւաքւեցին եպիսկոպոսները, քահանաները, ամբողջ ժողովուրդը և դէպի լոյսը գնացին. տեսան զանգակները իրանց իրանց էին ածոււմ և երկնային լոյսը ինչպէս արեգակային կայծեր լուսաւարում էին մի անմահացած սուրբ մարդու դիակը: Պատրիարքը մօտեցաւ սրբին, երկրպագութիւն տւեց, ձեռքը համբուրեց և ուզեց ձեռքի նամակը առնել և կարդալ, բայց չկարողացաւ մատների արանքից դուրս պոկել, այնուհետեւ փորձեցին եպիսկոպոսները և քահանաները, բայց նրանք էլ ոչ մի կերպ չկարողացան նամակը առնել և կարդալ Կանչեցին թագաւորին և Եփրեմին, եկան և նրանք: Թագաւորը և Եփրեմը ծունկ չոգեցին, աղթեցին և ապա սրբի ձեռքը համբուրելով նախ թագաւորը փորձեց նամակը ձեռքից առնել, բայց Աստուծոյ հրամանով անկարելի դարձաւ և երբ Եփրեմը մօտեցաւ, յանկարծ ի դարմանս ամենքի, սուրբը ձեռքը բարձրացրեց և նամակը դրեց Եփրեմի ականջի վրա: Եփրեմը նամակը տւեց պատրիարքին կարդալու և երբ պատրիարքը նամակը կարդաց, ամբողջ հաւաքւած ժողովուրդը սոսկաց, լսելով սրբի ձգ լինելը: Ընկաւ Եփրեմը սուրբ որդու գերկը և դռն արտասուներով սկսեց

108

| | Aprm.

| 2-40073

— 16 —

Թրջել անշնչացած դիակը և ասել, «ինչպէ՞ս կուրացան աչքերս, որ իմ կորցրած որդուն չկարողացայ ճանաչել և գոնէ կենդանի տեսնել»: Եկան Աննան և Մարգարիտը, նրանք էլ մազերը փետտելով սկսեցին իրանց կորցրած որդու և ամուսնու ձեռքերը համբուրել, լիզել, գլխին թակել և ողբալ: Այնուհետև դադարեցին, սրբի մարմինը իջեցրին մէջը և Սուրբ Սփրայի եկեղեցում հանդիսաւոր պատարագ մատուցանելուց յետոյ մեծ շքով թաղեցին, որի գերեզմանի վրայ՝ յետոյ մի փառաւոր եկեղեցի կառուցին:

Վ Ե Ր Զ



<< Ազգային գրադարան



NL0028803

